

Livy. ✓

32

Frage

256 g

2000

Լազ.
32

256.

I

ՄԻ ԴԵՊԹ

ԲԵՐԱՆՔԻ ԿԵԱՆՔԻՑ.

II

ԿԵՑՑԷ ՖՐԱՆՍԻԱՆ.



Հրատարակումին

Ա. Ր Շ Ա. Լ. Ո Ւ Մ Ի.

1785



ՄՈՍԿՈՒՍ.

СМОУРЪՆ ՄԿՐՏԻՁ ԲԱՐՐՈՆԻԿԱՐԵԱՆԻ.

1893

(59)

Дозволено цензурою. С.-Петербургъ, 30 Ноября 1892 года.

28-33

32-96

284



Типог. М. Бархударьянъ. Москва, Мясницкая, д. нас. Анапова.



Մ Ի Դ Է Պ Բ

ԲԵՐԱՆԺԷԻ ԿԵԱՆՔԻՑ

(Մ. Չիստեակովից.)

Ներկայ դարում Ֆրանսիայում ապրում էր նշանաւոր երգիչ Բերանժէն: Նա մեռաւ Փարիզում 1857 թուին:

Բերանժէն ժողովրդական երգիչ էր և հենց այս բողեկա էլ մարդ չէք գանիլ Փարիզում, որ ծանօթ չըլինի նրա երգերի հետ: Ամեն մէկը՝ զրազեա թէ անդրազեա՝ կամ ինքն է երգում Բերանժէի երգերը, կամ բերան զիաէ բոլորը, կամ մի անդ լսել է նրանց:

Բերանժէն մի ծաղիկ էր, որի անուշ հաօից Բերանժէի կեանքից.

չէր կշտանում Փարիզի ժողովուրդը: Նա այն-
պիսի մի լեզուով էր խօսում իր երգերում, որ
նրա ամեն մի խօսքը ժողովրդի հէնց սրտի
մէջն էր մտնում: Նա ժողովրդի ցաւերի թարգ-
ման էր. լաւ հասկանում էր նրա դարդն ու
ուրախութիւնը, լայն ու ծիծաղը, մօտ ծանօթ
էր ժողովրդի վարք ու բարքին, նիստ ու կա-
ցին, որովհետեւ երկար ապրել էր նրա հետ,
նրա մէջ ծնուել, նրա մէջ մեծացել, և, ինչպէս
ինքն էլ ասում է իր մասին — օրօրօցի անդ՝
ես յարդի (վարման) վրայ էի քնում — որ ասել
է, նա հասարակ ու աղքատ ծնողների զա-
ւակ էր:

Բերանժէն իր ամբողջ կեանքն աղքատու-
թեան մէջ անց կացրեց, բայց նա այդ մասին իսկի
չէր էլ մտածում: Թէ պատահամբ ձեռքը փող
էր ընկնում, այդ փողը նա իր վրայ չէր ծախ-
սում, այլ օգնում էր իրանից աւելի չքաւոր-
ներին:

Բերանժէի երգերի աղբիւրը ժողովրդի կեանքն
էր: Այդ պատճառով էլ նրա երգերի մէջ մի
անասկ կրակ կար, որ այրում, խորովում էր

ժողովրդի սիրան ու հողին: Պատահում էր, որ
Փրանսիացում ժողովուրդը շատ անգամ անբա-
ւական էր լինում աւրուձեան այս ու այն
անարգար կարգ ու կանոններից. Բերանժէն իր
երգերում խեղոյն աւրուձեան երեսօվն էր առ-
լիս նրա արարմունքները, և զրա համար էլ
խեղձին անգապար քաշքշում էին այս ու այն
զատարանները. . .

Այդպէս 1821 թուին՝ աւրուձիւնը Բերան-
ժէին մի քանի կճու երգերի համար երկք ամ-
սով բանա նստեցրեց և բայի զրանից ստիպեց
125 բուբլի տուգանք առ: Երգիչը լուռ ու
մունջ տուգանքը վճարեց և երեք ամիս էլ
բանա նստեց: Փարիզի համարեա բոլոր բնակիչ-
ները սրտանց ցաւում էին իրանց սիրելի երգչի
անբախտութեան վրայ:

Մի աշնանային իրիկուն Բերանժէն, երբ նոր
էր ազատուել բանախ ապականուած ու անառ-
նելի կեանքից, անց էր կենում մի յիս ընկած
փողոցով:

Սյգ օրը սաստիկ ցուրտ էր:

Նա հագած էր մի սաք, բամբակած բաձկոնակ՝ որն առաջից ծայրից-ծայր ամուր կոձկուած էր: Գլխարկն աչքերին քաշած, ձեռքումն էլ խաղողի որթից մի բարակ ճիպոտ, նա առաջ էր գնում: Երդիչը մի նեղ ու աչքից ընկած փողոցով շատապում էր իր սիրելի սրճարանը (ղայֆէտուն): Բերանժէն միշտ զխառնութեամբ այգւլխի խուլ փողոցներովն էր ման գալիս, որպէս զի չըպատահի իր ծանօթներին և միշտ փախչի այն անվերջ փառք ու պատուից, որոնցով հանդիպում էին նրան ամեն տեղ և այգւլխուով խեղձ երգչին շփոթութեան մէջ զյում:

Նոյնմբերի ցուրտ քամին հետզհետէ կուչ էր բերում Բերանժէին: Նա սկսեց քայլերը շապկեցնել, որ շուտ հասնի իր ծանօթ սրճարանը:

Սրդէն մուժն էր:

Բերանժէն հէնց ուզում էր ծուռել դէպի մի նեղ փողոց, երբ յանկարծ նրա ախանջին զխառն մանկական մի խուլ հառաչանք:

Երդիչը կանգնեց և սկսեց ախանջ դնել, բայց հառաչանքն էլ չըկրկնուեց:

—Մի՞թէ ինձ միայն թուաց այդպէս,—հարցրեց նա ինքն իրան:—Ո՛չ, ես պարզ լսեցի:

—Ո՞վ է այստեղ լալիս,—կանչեց նա բարձրաձայն իր փափուկ և սիրտ շարժող ձայնով: Պատասխան չկար:

—Ո՞վ է այստեղ լալիս,—կրկնեց նա աւելի բարձրաձայն:

Իսկոյն պատի ետեւից երևաց մի փոքրիկ երեխայ: Նա հագլիւ էր կարողանում կանգնել իր փետացած ոտների վրայ: Բերանժէն մօտեցաւ երեխային և սիրտ տալով՝ հարցրեց.

—Սյգ զ՞ու էիր այստեղ լալիս:

—Սյո՛, ես էի... պատասխանեց երեխան զողզողալով, աչքերն արտասուքով լցուած:

Խօսքից ու կերպարանքից պարզ երևում էր, որ այդ փոքրիկ սափջեարն այն խեղձ ու անբախտ երեխաներիցն էր, որոնք ամեն տարի Սափջեալից դալիս են Փարիզ մի կերպ իրանց օրական ապրուստը ձարելու:

Բերանժէն կարելով երեխայի խօսքը՝ հարցրեց.

—Ի՞նչ է պատահել քեզ, սիրելի՛ս:

— Ես քաղցած եմ և մրսում եմ, — լալով պատասխանեց երեխան:

— Միրելի՛ բարեկամ, — սրտացաւ ձայնով դարձաւ Բերանժէն երեխային, — եթէ պարսպմունքդ կօշիկներ սրբելն է, ինչպէս այդ երեւում է քո խողանակներից (շէօտկա) և կօշկաներկից (վաքսա), ապա ջուրով անող շատ վատ է: Այստեղ գնացող-եկողներ շատ քիչ կը պատահեն և դու շատ քիչ փող կարող ես վաճառակել:

— Մ... այո՛, շատ քիչ...

— Դու, երեխի, շատ ժամանակ չէ՛, որ Փարիզումն ես:

— Միայն երեք շաբաթ է, — ցրտից շունչը կարուած՝ հազիւ մրմնջաց երեխան և լաց եղաւ:

Բերանժէի սիրտը, կարծես, կտոր-կտոր եղաւ: Նրա աչքերը նոյնպէս ջրակալեցին:

Նա պինդ սեղմեց երեխայի ձեռքը և ասաց.

— Ինանք միասին: Բեղ, երեխի, աւելի լաւ են ծանօթ այստեղի փողոցները, քան թէ ինձ: Տար ինձ մի պանդոկ, որտեղ կարելի լինի քեզ մի կուշտ կերակրել:

— Ահա այստեղ՝ մօտեքում մի պանդոկ

կայ, ուր միշտ բանուորներն են ճաշ ուտում:

— Շատ լաւ, տար ինձ այնտեղ:

Նրանք գնացին:

Բերանժէն բոլորովին սրտաշարժուած էր: Նա շատ էր ցա ում անբախտ սավցիարի թշուառ ու անմխիթար վիճակի վրայ: Նա զգում էր, որ խեղձն իր ծնողների, իր հայրենիքի կարօտն էր քաշում, որ նա Փարիզի պէս մարդաշատ քաղաքում չունենարով ոչ մի ծանօթ, ոչ մի ցաւակից իր դռնն վիճակին և անկարող լինելով մի կտոր հաց ձարելու — այժմ հալումնաշ էր լինում աղքատութեան ճանկերում, լալիս էր քաղց ու ծարաւից, դողում էր ցրտից: Բերանժէն ուզում էր ինչքան կարելի է շուտով տաքացնել ու կերակրել խեղձ՝ երեխային և այդ պատճառով էլ նա այնքան շուտ-շուտ էր գնում, որ երեխան վազելով անդամ չէր հասնում նրա ետևից: Փէտացած ոտները չէին հնազանդում խեղձին:

Վերջապէս նրանք հասան պանդոկ:

Երգիչը ոտքը պանդոկի լուսաւոր սենեակի դռան շէմքից ներս գնելիս՝ հանդարտ ու քաղցր աչքով նայեց իր փոքրիկ բարեկամի վրայ: Ե-

րեխան մօտ 12 տարեկան էր: Նա այնքան լզար էր ու մաշուած, որ իր տարիքից աւելի փոքր էր երևում: Նրա փոքրիկ դէմքի վրայ նկարուած էր մի տեսակ մեռելային զուճատութիւն:

Յրտաշունչ հողմից խղճուկի շրթունքները բոլորովին կապակ էին, իսկ ձեռք ու օտքը կարմրել և ուռել:

Նրանք մտան բազմաթիւ սեղաններով լին սենեակը, որոնց շուրջ շարուած՝ ճաշում էին բանուորները: Նրանցից մի քանիսը ճաշը վերջացրած լինելով՝ ծխաքարչ էին ծխում և զրոյց անում, իսկ մի քանիսն էլ թուղթ էին խաղում և Բերանժէի երգերը երգում: Սակայն մի՛ կարծէք թէ նրանց թղթախաղի մէջ «աբասիներ» ու «մանէթներ» էին պատում—ոչ նրանց խաղն աւելի քաղցր ու զուարճալի էր: Սեղանի վրայ թափուած էին մեծ քանակութեամբ լուցիկի կտորներ. խաղացողներից ով տանուլ էր տալիս, ընկերներն այդ կտորներով խաղում էին նրա քթածակելը և այդպիսով համ իրանք ծիծաղում, համ էլ ներկայ եղողներին ծիծաղացնում:

Բերանժէն աչքի տակով նայեց պանդոկի հիւրերին և ժպտալով նրանց պարզ ու անսահման զուարճութեան վրայ, քայլերն ուղղեց դէպի պանդոկապետի երիտասարդ և գեղեցկագէմ աղջկը, որն աչք չէր պոկում բանասանցից, երեւի, զարմանալով որ իր պանդոկն էր մտել բաւականին հարուստ հաղնուած և, անկասկած, բոլորովին այլ դասակարգին պատկանող մի մարդ, որի տեղն աւելի շուտով շքեղ հիւրանոցն էր, քան թէ հասարակ պանդոկը:

— Խնդրեմ այս երեխային իմ հաշուով կուշա կերակրէք և որքան կարելի է մաքուր ու աննպարար կերակրով:— մեզմ ձայնով սասց Բերանժէն՝ զիմելով պանդոկապետի առջոյդ և կայտառ աղջկանը:

— Շտա բարի. ես այս բոպէիս նրա համար ընթրիք կըրբեմ,—ասաց երիտասարդ աղջկը և վազեց խոհանոց:

Բերանժէն սիրում էր միշտ հեռամուտ լինել հասարակ ժողովրդի վարք ու բարքին: Նա իր համար ընտրեց մի մութ, հեռուոր ու աննկա-

տելի անկիւն և այնտեղից սկսեց ամեն բան զիտել ու լսել: Նրա կողքին տեղ բռնեց նաև երեսան, որ տաքութիւնից զուարթացած՝ ուրախ ժպտում էր, մտածելով որ շուտով նրա համար տաք և համեղ կերակուր պէտք է բերեն:

Աղջիկը վերադարձաւ իր հետ բերելով ընթրիքը:

Երկխոսն խաչակնքեց երեսը և սկսեց ուտել: Բերանովէն մի առանձին բաւականութեամբ էր նայում այդ թշուառ սովոյեարի վրայ, որն այդ րոպէին արագաշարժ մեքենայի պէս զործում էր, առանց դէս ու դէն նայելու: Բայց շուտով բանաստեղծի ուշադրութիւնը գրաւեց սննեակի միւս ծայրում բարձրացող ազդակը:

—Սյն, այն,— գոռում էր բանուորներից մինը.
—Ես իմ ահանջովս լսեցի զանապանից, որ Բերանովէնին ազատել են բանտից: Եկէ՛ք, եղբայրներ, ի պատիւ մեր սիրելի բանաստեղծին երգենք հէնց այն երգը, որի համար նա այնքան տանջուեցաւ: Ամօթ և նախատիւնք մեզ, որ նրան չբազապանեցինք: Իէ՛հ, սկսեցէ՛ք. շուտ-շուտ երգենք այդ երգը, որ չքմուանանք:

Եւ բոլոր ներկայ երգչները միասին երգեցին իրանց ծանօթ և սիրելի երգը: Թէպէտ նրանց ձայները խռպոտ էին և աննկարագնասի, սակայն նրանք հնչում էին աննկարագրելի եռանդով և երգոյներից ամեն մէկն աշխատում էր իր բարձր գոռոցով զերգանցել ընկերոջը:

Բանաստեղծի սիրան ակամայ գգացուեց բանուորների այդ եռանդուն երգեցողութիւնից:

—Եւ ի՞նչպէս խիզձները չքտանջեց, որ այսպիսի մի հրաշալի երգի համար բանաստեղծին նրան,— գոչեց երգոյներից մինը՝ վերջացնելով երգը:

—Սյն, այն. էլ տտում ե՛ս. այդպիսի մի բարի, ազնիւ և պատուական մարդուն բանաստեղծը... Որքան ամօթ և անպատուութիւն Փրանսիային. . .

—Կեցցէ՛ Բերանովէն,— բացականչեց երրորդը՝ բաժակը վեր բարձրացնելով:

Պանդոկը թնդաց ցնծալի ազդակներով:

Բերանովէն կարմրեց: Նրա աչքերը փայլեցին: Նրա սիրան այնպէս էր բարխում, կարծես ուզում էր պատռել բանաստեղծի կուրծքը և

գուրս թռչել իր բնից: Բայց Բերանժէն շուտով ուշքի եկաւ, զսպեց սրտի յուզմունքը և փաղաքշարար նայեց երեխային: Նրա առջևի ամանները զատարկ էին: Աղջիկը սեղանի մօտ կանգնած՝ անթարթ աչքով նայում էր բանաստեղծին: Բերանժէն լեզուեց զէպի երեխան և կամայուկ հարցրեց. «կշառցա՞ր»:

—Օ, անչափ շնորհակալ եմ բոլորովին կշառցայ: Ինչ որ ամանից գուրս եմ եկել, զեռայսպէս կուշտ փորով հայ չէի կերած:

—Շատ լաւ. քեզ հալալ զէհ, այժմ զընանք:

Բերանժէն վճարելով ընթրիքի փողը՝ շտապեց զէպի գուրս: Բանաստեղծն աղջկայ զէմքից նշմարեց, որ նա իրան ճանաչել էր: Աղջիկը պատուով և քաղաքավարութեամբ ճանապարհ զրեց նրան մինչև գուրս և այն բուրդէին, երբ Բերանժէն ուզում էր ոտքը զուան շէմքից գուրս գնել, երխաստարդ աղջիկը բռնեց նրա թեկից, կանգնեցրեց և ցածրաձայն շշնջաց.

—Ես ձեզ ճանաչեցի, ո՞վ աղնիւ և բարեսիրտ մարդ. թո՛յլ տուէք ինձ սեղմել ձեր ձեռքը:

Բանաստեղծը մի սիրալիր հայեացք ձեց աղջկայ վրայ, ժպտաց և ձեռքը մեկնեց զէպի նա: Աղջիկն ուրախացած բռնեց բանաստեղծի ձեռքը, մի քանի անգամ ամուր սեղմեց, ջերմաջերմ համբուրեց և քաղցր ժպտը երեսին՝ «բարի զիշեր, պարոն Բերանժէ» բացականչելով՝ ներս վաղեց սենեակը:

Բերանժէն հաղիւ թէ մի քանի քայլ էր արել, երբ յանկարծ նրա հոռեկ լուսեցան բարձրաձայն և զմայլիկ աղաղակներ, որոնք թնդեցնում էին օդը: Նրանց մէջ լսվում էր Բերանժէի անունը: Անտարակոյս աղջիկն էր պատմել բանուորներին, որ քիչ առաջ պանդուկում առանձնացած նստողը Բերանժէն էր, որ նա բարութիւն արաւ, կերակրեց աղքատ և անօգնական երեխային:

Բերանժէն մտաւ միւս փողոցը, բայց ուրախալի ձայները դարձեալ լսվում էին: Այստեղ զեռ ոչ ոք չէր քնած: Պատու հաններից լոյս էր երևում: Բոլոր խանութներն ու կրպակները բաց էին: Յանկարծ բանաստեղծի աչքովն ընկաւ մի շոր ծախսողի խանութ: Նա կանդ առաւ խանութի

դուան առաջ և դառնալով երեխային՝ ասաց.

—Ներս մանենք այստեղ:

Նրանք ներս մտան:

Շոր ծախողը գլուխ տալով՝ քաղաքավարութեամբ հարցրեց.

—Ի՞նչ էք կամենում:

—Ձեզ մօտ կրգանուի մի ձեռք բանեցրած, բայց շնորհքին հազուստ այս երեխայի համար:

—Ինչպէս չէ. այս բոլորիս:

—Խնդրեմ, որքան կարելի է, տաք և զիմացկուն լինի:

Այդ միջոցին լսողների լոյսն ընկաւ Բերան-ժէի գէմքին: Շոր ծախողը խորին ուշադրութեամբ նայում էր բանաստեղծին և ինչ-որ մտածում: Բայց յանկարծ նրա գէմքի վրայ փայլեց աներկրայութեան նշան: Նա միամտուէց: Նրա աչքերն ուրախութիւնից փառուէցան: Նա ձեռքերն իրար շփելով՝ խոնարհաբար խնդրեց Բերանժէին, որ սա պատուի իրան և բարեհաճի իր աղքատիկ սննտակում, փառարանի առաջ նստելու, մինչև որ ինքն երեխայի համար հազուստ և կօշիկներ կըջօկէ:


—Այլ բոլորը զժուար է մի քանի բուլեւոմ վերջայնել. այնպէս որ ձեզ համար բաւականին ծանր կըլինի շարունակ օտքի վրայ կանգնած մնալ: Խնդրեմ, նստեցէք փառարանի առաջ և առքայէք, — ժպտալից գէմքով առաջարկեց շոր ծախողը:

Որովհետև պանդօկում խիստ տաք էր, խոկ փողոցում սաստիկ քամի, որը շոր ծախողի խանութի ամեն ծակօժուկերից ներս էր փչում, ուստի Բերանժէն բաւականին ցուրտ էր զգում: Նա մեծ սիրով ընդունեց տաք սննտակում նստելու առաջարկութիւնը: Այստեղ նրա առաջն եկաւ շոր ծախողի երիտասարդ կինը, որ խաղոյն աթոռ տալով հիւրին՝ խնդրեց նստել: Շոր ծախողը զուրս ելաւ խանութ՝ երեխայի համար հազուա ընտրելու: Իսկ նրա կինը կարճ առնելով՝ նոյնպէս նստեց փառարանի մօտ:

Շուտով նրա և հիւրի մէջ սկսուեց տաք խօսակցութիւն:

Շոր ծախողը զուրս գնալուն պէս խանութ՝ դարձաւ գէպի փոքրիկ սավոյեարը և հարցրեց.

ՅԵ-ՅԵ



— Ի՞նչ ճանաչում ես այդ պարոնին, որի հետ մտար այստեղ:

— Ո՛չ ես նրան չեմ ճանաչում: Բայց նա շատ բարի մարդ է: Նա ինձ այնպէս հուշա կերակրեց: Ես գեռ հրբէք այդպէս հուշա հաց չէի կերած:

— Հաւատում եմ, հաւատում եմ: Նա միշտ այդպէս բարի է: Բայց զիտե՞ս նրա անունն ի՞նչպէս է:

— Ո՛չ, միայն, կարծեմ, Բե...բեր...

— Բերանժէ խօ չէ՞, — հարցրեց շոր ծախողը:

— Այո՛, այո՛, հէնց այդպէս է: Հէնց այդպէս անուանեց նրան պանդոկապետի աղջիկը, երբ համբուրեց նրա ձեռքը:

— Օ՛, որքան՝ ուրախ եմ ես, հոգեակս — և այդ ուրախութեամբ քե՛զ հմ պարտական: Ես այս բոպէիս այնպիսի մի բախտաւորութիւն եմ զգում, որպիսին կեանքումս չեմ զգացած: Այո՛, մե՛ծ և անմոռանալի է այդ բախտաւորութիւնը. Բերանժէն՝ մեր զարգերի թարգմանը, մեր ամենիս սիրելի և պաշտելի Բերանժէն՝ իմ աղքատիկ կուռրի աակն է, իմ տան

քանդքնդորուած վառարանի առաջն է նստած:

Շոր ծախողն ուրախութիւնից իրան բոլորովին կորցրել էր: Նա չքղիտէր ինչ էր անում: Կամ այս հագուստն էր վերցնում, էլի իր տեղը դնում, կամ այն հագուստն էր վերցնում, դէն շարտում, կամ խանութի այս ու այն անկիւնն էր ընկնում և ոչինչ չէր գտնում: Բաւականին ժամանակ անցաւ, մինչև որ նա խեղքը դուրսն հաւաքեց և մի յարմար հագուստ գտաւ երկխայի համար:

Վերջապէս երեխան հագաւ նոր շորը:

Նրա երեսը վառվում էր ուրախութիւնից: Նոր հագուստը նրա վրայ շատ լաւ էր նստած և տաքացնում էր նրա սառած մարմինը: Բրդէ դուլպաներն ու ամուր կօշիկները նրա մերկ օտները պաշտպանում էին ցրախից: Նա մեծ հոգածութեամբ ծալելով իր հին, բանեցրած շորերը՝ կաշուէ կրկայն թոկով կապեց նրանց իր արկղիկից, որի մէջ գտնվում էին խողանակներն ու կօշիկները:

Շոր ծախողն ուրախ սրտով նայում էր նրբան:

Երբ ամեն բան պատրաստ էր, նա դարձաւ երեխային և ասաց.

— Դէ՛, քաջ իմ, այժմ գնանք մի ս սենեակը: Նոր հագուստդ ցոյց տուր Բերանժէին և շնորհակալութիւն արա:

Երեխան շոր ծախողի հետ մտաւ միւս սենեակը, մօտեցաւ իր բարերարին, բայց սրտի յուզմունքից ոչինչ չըկարողացաւ ասել. միայն նրա աչքերից սկսեցին արտասուքներ թափուել, արտասուքներ, որոնց մէջ փայլում էր անսահման ուրախութիւն:

Բերանժէն ժպտաց և սկսեց երեխային դէս ու դէն դարձնել: Նա մի սոսանձին բաւականութեամբ շօշափում էր սաք և հաստ մահուզը, զննում էր գուլպաներն ու կօշիկները: Վերջապէս նա շատ գոհ մնաց և դառնալով շոր ծախողին՝ հարցրեց.

— Ի՞նչ արժէ այս բոլորը:

Շոր ծախողը հակառակ իր ցանկացածին՝ բոլորովին աժան գնահատեց:

Բերանժէն զրպանից հանելով քսակը՝ միջև փողերը թափեց սեղանի վրայ և սկսեց համբա-

րել: Բայց որքան մեծ եղաւ նրա շփոթութիւնը, երբ տեսաւ, որ փողերը չեն բաւականանում շոր ծախողին վճարելու: Բանաստեղծը միանգամայն այլայլուած՝ սկսեց զրպանները տակն ու վրայ անել, բայց ի զուր—ոչինչ չըգտաւ:

— Աստուած իմ, — ասաց նա յուզեաժ ձայնով. — չըգտան, ճշմարիտ, թէ ի՞նչ պէտք է անեմ, փողերս չեն բաւականանում. . .

Շոր ծախողը ժպտաց, մօտեցաւ սեղանին, փողերը ժողովեց և ամէկով սեղանի արկղը՝ սիրալիւր ձայնով ասաց.

— Ո՛վ ազնիւ մարդ, դուք ասանց այն էլ շատ խնամք էք տարել այս անբախտ երեխայի վրայ: Թո՛ղ տուէք ինձ ևս, իմ կողմից մի փոքրիկ օգնութիւն անել նրան: Էլ ոչինչ չե՛ հարկաւոր ինձ. դուք բոլորը վճարեցիք: Ես անչնփ շնորհակալ եմ այս երեխայից: Նա ինձ անպատմելի ուրախութիւն պատճառեց: Աստուանց նրան, ես երբէք բախտ չէի ունենալ նշանաւոր բանաստեղծ և ամբողջ Փրանսիայի սիրելի Բերանժէին իմ տանը, իմ ազգատիկ կտուրի տակ տանելու:

— Այս ի՞նչ եմ լսում, — յանկարծ բացականչեց կինը զարմացած: — Մի՞թէ այս պարոնը Բերանժէն է:

— Այո՛, այո՛, Բերանժէն է, — պատասխանեց շոր ծախողը սիրալիբ հայեացք ձգելով բանասանդծի վրայ: — Մեր այս անսպասելի հիւրը Բերանժէն է. — և նրա դէպի չքաւորներն ունեցած անկեղծ և անսահման կարեկցութիւնը բերեց նրան այստեղ: Օ՛, դուք չէք կարող երեւակայել, ո՞վ պոնիւ հողի, թէ որչափ մենք սիրում ու պաշտում ենք ձեզ:

Բերանժէնի շփոթութիւնն հեազհեա ասելանում էր: Շոր ծախողի կինը բռնած բանասանդծի ձեռքից, անվերջ համբոյրներով ծածկում էր նրան. խիկ երեխան, որի աչքերն ուրախութեան արաստուքով լցուել էին, կպել էր շոր ծախողին:

— Թողէ՛ք ինձ, ի սէր Աստուծոյ, թողէ՛ք, ես պէտք է գնամ, — ասում էր Բերանժէն՝ աշխատելով իր ձեռքը մի կերպ աղատել կնոջ ձեռքից:

Եւ բանասանդծի արաստուքով լի աչքերում

այդ բոպէին պարզ նշմարվում էին աղաչանք և պաղատանք:

Վերջապէս նա մի կերպ աղատեց իրան այդ շփոթ գրութիւնից և քայլերն շտապով ուղղեց դէպի խանութի գուռը, աշխատելով ծածկել իր սրտի յուզմունքը:

Նրա ետեւից լսվում էին. «Թող Աստուած օրհնէ ձեզ»:

Երկար ժամանակ բանասանդծը զուլսը կտն՝ շրջում էր փողոցներում:

Վերջապէս նա մտաւ իր սիրելի սրճարանը և նստեց պատուհանի մօտ — իր սովորական տեղը:

Նա լուռ էր:

Նրա երեսին փայլում էր ուրախութիւն: Բանասանդծը մինչև անգամ մոռացել էր իր առաջ զրուած սուրճով լի բաժակը, որ բերել էր տանտիկինը: Երբ վերջինս յիշեցրեց նրան, որ սուրճը սառչում է, բանասանդծը ժպտաց, նայեցաւ տանտիկնոջ և մի ձեռքով լրագիրը վերցնելով, միւս ձեռքով սկսեց սուրճը խմել:

Երբ սուրճը վերջացրած՝ Բերանժէն պատ-

րաստփում էր սուն գնալու, դարձաւ ասնախի-
նոջը և քաղցր ժպիտով ասաց.

— Ներեցէք, որ այսօր անկարող եմ ձեզ
խմածս սուրճի փողը վճարել: Խնդրեմ իմ հա-
շուին գրեցէք: Այս բուպէիս զրպաններս դա-
տարի են. . .

Եւ անմահ բանաստեղծի զրպանները մինչև
նրա կեանքի վերջին օրերը դատարկ մնացին...



ԿԵՑՑԷ ՓՐԱՆՍԻԱՆ

(Փրանսերէնից.)

Փոքրիկ ժանր վերջին շաբաթն ինքն իրան
շատ լաւ էր պահում: Վայելչագրութեան գասի
մի քանի երեսները նա զեղեցիկ գրեց. բոլոր
ի-երի վրայ ճշտութեամբ գրեց կէտերը և Է-երը
խաչեց գծերով: Նա ոչ մի անգամ չկուսցաւ
սեղանի վրայ և ոչ մի բծով չկեղտոսեց ոչ
տետրակը, ոչ էլ իր սեղանի սպիտակ սփռոյրը:
Նա իրան օրինակելի էր պահում:

Բայց ի՞նչ պարզե կրտսանայ նա այդ բոլորի
համար:

Ահա թէ ինչ. նա վաղն իր ծնողների հետ
կրգնայ բուլվար զբօսնելու գնեւրալի հագուս-

տով: Բոլոր երեխաները նրան տեսնելիս՝ կը կանգնեն կարգով և կըբացականչեն՝ — Կեցցէ՛ գեներալը, կեցցէ՛ Ֆրանսիան:

Իսկ փոքրիկ գեներալը լըջութեամբ կըսկսէ աջ ու ձախ ողջոյններ տալ, և անցորդները կը կարծեն թէ նա յաղթական պատերազմից է վերադառնում: Մայրը նոյնպէս շատ ուրախ է. նա հանել է արկղից ահագին սուրն ու խկ և խկ գեներալի նշանազգեստը: Այդ հագուստը ժանին նուիրել է նրա կնքամայրը:

Պառկել է ժանը մահճում, փաթաթուած տաք վերմակով և ազահութեամբ նայում է իր փայլուն, գեներալի նշանազգեստի վրայ:

Ծնողները մի քիչ երես էին տալիս, բայց զրա վրայ չպէտք է զարմանալ: Չէ՞ որ պարտիզպանը, երբ փոթորիկը փչացնում է նրա ծաղիկները, իր բոլոր ուշադրութիւնը դարձնում է միտկ անփնաս մնացած մարդարիտ ծաղկի վրայ, կամենալով զոնէ նրան մեծացնել: Իսկ ի՞նչ ասենք ժանի խեղճ մօր մասին, որի երկու որդիքը մի օրուայ մէջ զոհ զնային անգութ զիջարիտին, որը մինչև այժմ էլ զոհեր է

տանում: Այդ պատճառով զարմանալի չէ, որ մայրը այդպէս զոգում է իր ժանի համար և կատարում է նրա ամեն մի հաճոյքը:

Ժանը մեծ ցանկութիւն ունի զինուոր դառնալու: Նրա փոքրիկ զլխի մէջ յաճախ մտքեր են պատում Էլզաս և Լոթարինգիայի*) մասին, և այդ դէպքում ամեն ժամանակ նրա մեծ, բարի աչքերը պատերազմական ոգի են արտայայտում: Թափահարելով իր շիկահեր գանգուրները, որոնցով պսակվում էր նրա փոքրիկ երեսը, ութնամեայ ասպետը ողևորութեամբ աւում է.

— Նրանք յետ կըտան մեզ յետ կըտան Էլզաս և Լոթարինգիան:

Եւ քաջ երեխան առաջնորդելով անազից շինած զինուորների գնդին, տապալում է թշնամիներին, որոնք կազմուած են նոյնպիսի զինուորների գնդից: Սեղանի վրայ փակելով թշնա-

*) Էլզաս և Լոթարինգիան ֆրանսիական զաւառներ են, որը գերմանացիք 1871 թուին խլեցին ֆրանսիացիներին: Սորա մինչև այժմ էլ ձգտում են լետ դարձնել վերոյիշեալ զաւառները:

միների ամբողջ զունդը, ժանը ցատկում է մօր
ճնկների վրայ և բացահանչում է յաղթական
ձայնով՝

— Մայրիկ, մայրիկ, ես բոլոր զերմանայիներ-
րին հօտորեցի: Սակայն մի րօպէից ժանի սպա-
նած զերմանայիք յարօթիւն են ասնում, նրա՛
համար, որ կրկին ընկնեն պատերազմասէր ե-
րկսայի հարուածներից:

Բարիկենդանի վերջին օրն էր, երբ երեսան
զինուորներով լի արկղիկը և ձեռքում բռնած
ցնորելով էլզասի և Լոթարիւղիայի մասին—
քնեց իր փոքրիկ մահճակալի վրայ:

Բայց նրա քունն անհանգիստ էր: Նա ան-
զադար շարժվում էր, քնի մէջ խօսում, կան-
չում՝

— Ի զէ՛ն, ի զէ՛ն, յառաջ սուկներով...

Մայրը կռանալով մահճակալի վրայ, ուշա-
ղբութեամբ զիտում էր նրա ամեն մի շարժումը:

— Գնա՛, քնի՛ր, — ասում էր ամուսինը, ժա-
նը վաղուց մասին է երազում...

Բայց մայրական սրտում մի ինչ-որ վառ
նախազգուշութիւն ծագեց: Նա չհեռացաւ իր

որդու մահճակալից, չնայելով որ երեսան խոր
քնած էր, իսկ շնչառութիւնը հանգիստ էր և
համահաւասար:

Յանկարծ ժանը մի քիչ հաղաց. ծեղները
զողացին վախից, բայց երեսան չէր արթնա-
նում:

— Այդ մեզ միայն թուաց, — ասաց վերջապէս
ամուսինը հանգարտուելով. — զնանք քնելու:

— Ո՛չ, ոչ նստենք էլի մի քիչ այստեղ, —
ասաց կինը:

Ամուսինը չհակառակեց և նրանք զեռ եր-
կար ժամանակ նստած էին իրանց միակ որդու
մահճակալի մօտ:

Եկեղեցու ժամացոյցը խփեց կէս զիշերուայ
ժամը: Ամեն սեղ խաղաղ էր և մութ, միայն
ժանի սենեակում զեռ պլպլում էր զիշերուայ
կանթեղը, աղօթ լոյս ձգելով ճնողների ջահել
երեսներին, որոնք կռացել էին փոքրիկի մահ-
ճակալի վրայ:

Ժամացոյցի վերջին հարուածը արթնացրեց
երկսային, և ժանը հառաչեց, հաղաց. կրծքի
մէջ լսուեց շարպուշակ, երկար խրխուոյ:

Մայրը երեսի դոյնը կորցրած, գողալով, յուսահատութեամբ ծունկ չոքից և սկսեց հեկեկալ, աղաչելով Աստուծուն, որ խնայէ իր որդուն: Հայրը վաղեց բժիշկ բերելու:

Ժանը բաց արեց աչքերը և, ցոյց տալով կոկորդի վրայ, կամաց արտասանեց՝

— Մայրիկ, այստեղ ցաւում է, — և նրա թաթիկները բաց թողեցին զինուորներով լն արկղիկը:

Այդ բուպէին ներս մտաւ բժիշկը:

Խեղճ մայրը անձայն տարածելով ձեռները, յօռեց նրա վրայ իր աղերսալից հայեացքը:

Այդ հայեացքն ամեն ինչ արտայայտում էր՝ և երկիւղ, և յուսահատութիւն, և աղերսանք...

Ժանը կճկուեւէ էր բարձերի վրայ. անընդհատ չոր հազը պատառում էր նրա փոքրիկ կուրծքը:

Նայելով մերթ մօրը, մերթ զինուորների արկղիկի վրայ, ձեռք մեկնելով նա խնդրեց մօրը, որ բերէ իր գեներալական նշանազգեստը և զլխարկը: Երբ մայրը բերեց այդ ամենը և հաղցրեց նրա զլխին զլխարկը — մի փոքր ժպիտ երևաց երեխայի շրթուներին:

— Գեներալ, — ասաց բժիշկը գողգոջիւն ձայնով. — պատրաստ ես արդեօք դու տանջուել Փրանսիայի համար:

— Փրանսիայի՞ համար, — մեղմ ձայնով կրկնեց Ժանը սաստիկ հազալով. — ո՛հ, այո՛:

— Գիտես ինչ է պատահել. — քեզ վերաւորեցին կռուի ժամանակ — շարունակեց բժիշկը: Երեխան զարմանքով նայեց մօրը:

— Գնդակը մնացել է այստեղ, կոկորդումդ — և ես պէտք է հանեմ — շարունակում էր բժիշկը:

Երեխան իր բոլոր ուժով սեղմեց սրի կոթը և բարձրացնելով դուխը, ասաց.

— Լաւ:

Բժիշկը գործիքը ներս տարաւ փոքրիկ ասպետի կոկորդը, խկ խեղճ մայրը արտասուալից կրկնում էր՝

— Ժան, սա Փրանսիայի համար է. . .

Անդամահատութիւնը վերջացաւ: Փոքրիկը ոչ մի ձայն չհանեց: Բժիշկը ամբողջ գիշերը մնաց հիւանդի մօտ և առաւօտեան ծնողներին ուրախալի լուր հաղորդեց, թէ նրանց միակ

որպէն վասնզի մէջ չէ: Հանգստացնելով ծնող-ներին՝ նա առն զնոց:

Կէս օրին բժիշկը վերադարձաւ մի փոքրիկ փաթթոց ձեռին: Բանալով փաթթոցը, նա հանեց այնտեղից կարմիր ժապաւէն, հազցրեց երեխային և ասաց.

— Գիներալը քո քաջութեան համար տալիս են քեզ «Պատուաւոր Լէզիոնի» շքանշանը:

Ո՞վ կարող է նկարագրել առողջացող երեխայի սերախօսութիւնը: Նրա զժգոյն երեսը երջանկութիւն էր արտայայտում և նա բացահանչեց՝ որքան թոյլ էր տալիս նրան հիւանդութիւնը.

— Կեցցէ՛ Փրանսիան, կեցցէ՛ Փրանսիան:



ՀՀ Ազգային գրադարան



NL0596435

